ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ԱՌՑԵԼԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԾՈՒՌ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ

Լույս է տեսել «Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եւ մեր պատմության ընթացքը»[1] աշխատությունը, որտեղ քննության են առնվում Հայոց Եկեղեցու պատմությանն առնչվող իրողությունները՝ պատմության առողջ ըմբռնմանը հակասող մեկնաբանություններով ու եզրահանգումներով, դրույթներով, ինչպես, ասենք, հետեւյալն է. «Հանուն Հայաստանում սեփական իշխանության հաստատման՝ քրիստոնեական Եկեղեցին կործանեց Հայոց պետականությունը» (էջ 8): Մինչդեռ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց (301 թ.) հետո Հայոց պետականությունը վերելք ապրեց՝ զինվելով նոր գաղափարախոսությամբ, որը միավորում էր երկիրն ու ժողովուրդը: Գրիգոր Լուսավորիչը, նրա հաջորդները հետեւողականորեն պայքարում էին Սասանյանների հովանավորությունը վայելող հեթանոսության դեմ՝ երկիրը զերծ պահելով պառակտումից, պետության հիմքերը՝ խարխլումից: Լուսավորչի ավագ որդու՝ Վրթանես Կաթողիկոսի օրոք հեթանոսությունը շարունակում էր ալեկոծել երկիրը, սասանել պետության հիմքերը: Հայրենասեր ուժերը համախմբվում են նրա շուրջը, միջնորդում Հռոմի Կոստանդ կայսերը եւ Հայաստանում թագավորեցնում Խոսրով Կոտակին (330-338)[2]: Նույն Կաթողիկոսը ջանքեր ներդրեց՝ երկրի միասնությունը խաթարող, թագավորի իշխանության հիմքերը սասանող միջիշխանական բախումներին վերջ տալու համար[3]: Ներքին ու արտաքին ախոյանների դեմ Եկեղեցին ու պետությունը պայքարում էին միասնաբար: Նրանց միջեւ հաստատված բնական դաշինքը տվեց ցանկալի պտուղներ: 335 թ. մագքութների Հայաստան կատարած հարձակումից հետո Վրթանեսը հատուկ կոնդակով սահմանեց, որ յուրաքանչյուր տարի պատարագին պետք է հիշվեն Հայրենի երկրի համար մղված մարտերում զոհված հայ ռազմիկների անունները[4]: Իսկ ըստ Մովսես Խորենացու՝ Վրթանեսը զահաժառանգ Տիրանին անձամբ տարել է Հռոմի Կոստանդ կայսեր մոտ՝ ճանաչել

---

1 Հ. *Դավթյան*, Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին եւ մեր պատմության ընթացքը, Եր., 2000 :

2 Տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխ. Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփխիս, 1913, III, Ե., էջ 260-261:

3 Տե՛ս «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, III, Դ, էջ 9, Ը, էջ 17-18:

4 Տե՛ս անդ, III, ԺԱ, էջ 24:

տալով Հայոց թագավոր[5]: Վրթանեսը նման քայլերով արդյո՞ք ջանում էր թուլացնել Հայոց պետականությունը: Կամ երբ Ներսես Մեծը (353-373 թթ.) հայրենանվեր ձեռնարկումներով ծնկի բերեց հեթանոսությունը՝ դեռեւս գիր չունեցող Հայաստանը պատնեշելով օտարի հավատից ու օրենքներից, գործում էր պետության դե՞մ: Նա՞ չէր, որ նախարարներին համախմբեց Արշակ II թագավորի շուրջը, կարգավորեց հայ-հռոմեական հարաբերությունները: 354 թ. Տարոնի Աշտիշատ ավանում Ներսես Մեծը թագավորի ու նախարարների հետ միասին հրավիրեց հայոց առաջին եկեղեցաժողովը, որի մշակած իրավադրույթները եւ դրանց շնորհիվ կյանքի կոչված բարեփոխումները ամրացրին Հայոց պետականության հիմքերը, նպաստեցին երկրի հոգեւոր-բարոյական վերածննդին, խթանեցին նրա մտավոր առաջընթացը. մի այնպիսի ժամանակ, երբ Հայաստանն ապրում էր ներքին ճգնաժամ եւ նրա գլխին կախված էր արտաքին հարձակումների սպառնալիքը[6]: Այդ բարեփոխումների շնորհիվ Հայաստանը վերգտավ ներքին կայունությունն ու զորությունը՝ վերականգնելով իր դիրքերն Արեւելքում[7]:

Եթե հետեւենք Դավթյանի մեկնակերպին, կստացվի՝ Եկեղեցին, «թուլացնելով, ապա նաեւ կործանելով համահայկական պետականությունը», հետագայում նրբորեն խրախուսեց, որպեսզի դա վերագրվի պարսկական ու բյուզանդական պետություններին (էջ 13): Ըստ այդմ՝ 428 թ. Արշակունիների Հայոց թագավորությունը վերացել է ոչ թե Սասանյանների, այլ Եկեղեցու եւ նրա գլուխ կանգնած Սահակ Կաթողիկոսի մեղքով: Սահակը չէ՞ր, որ 423 թ. Վաղարշապատում հրավիրեց հայ ազատանու ժողով, որտեղ որոշվեց Հայոց թագավորի գահին հաստատել Արտաշես Արշակունուն: Սահակը չէ՞ր, որ կտրուկ հրաժարվեց գործակցել Հայոց թագավորությունը վերացնելուն միտված նախարարների հետ՝ նրանց երեսներին նետելով իր թեւավոր խոսքը՝ «Ես իմ հոտի մոլորյալ ոչխարին չեմ մատնի անհավատներին՝ այպանելու»[8]: Նա մինչեւ վերջ ընդդիմացավ Արտաշեսին գահընկեց անելուն, որը տեղի ունեցավ Վռամ Ե արքայի կայացրած հրապարակային դատի ժամանակ, երբ Սահակը ծառացավ թագավորական ատյանի որոշման դեմ, ի հետեւանս որի զրկվեց Կաթողիկոսի իրավասությունից եւ երեք տարի պահվեց աքսորում: Անգամ այդ պայմաններում նա կարողացավ Վռամ արքայից համաձայնություն կորզել՝ վավերացնելու հայոց Արշակունի թագավորների օրոք գործող հայ նախարարությունների գահակարգը (Խոր. Գ, կե), որը մեզ է հասել «Գահնամակ» անունով: Սակայն Դավթյանը քամահրում է այս փաստերը՝ նշելով, թե իբր Վռամ արքան Սահակ Կաթողիկոսի «անչափ խոսուն լուռ համաձայնությամբ թագազրկեց Հայոց աշխարհը» (էջ 43):

Մեղանչելով պատմական ստուգության դեմ՝ նա գրում է. «Մենք երբեք չենք

5 Տե՛ս *Մովսէս Խորենացի*, III, ԺԱ, էջ 268:

6 Տե՛ս *D. Marshall Lang*, Armenia cradle of civilization, London,1970, էջ 160.

7 Տե՛ս *R. Grousset*, Histoire de l' Armenie, Paris, 1947, էջ 148.

8 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Թիֆլիս, 1904, I, ԺԳ, էջ 21:

հասել պետության եւ Եկեղեցու միասնության» (էջ 22): Իր մտահնարքները մատուցելով ընթերցողին իբրեւ պատմական իսկություն՝ նա չի վարանում գրել, որ 428 թ. «հրաժարում եղավ սեփական թագավորից ու փոխարենը որեւէ ուղիղ պայման չդրվեց», եւ Հայաստանի կառավարմանը հայերի մասնակցությունը «մնաց չպարզված» (էջ 25): Մինչդեռ Եղիշեն վկայում է[9], որ Արշակունիների անկումից հետո «ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն». քանի դեռ կային հայ նախարարությունները, Հայաստանը բառիս բուն իմաստով մնում էր աննվաճ:

Անլուրջ է հեղինակի այն պնդումը, թե իբր Հազկերտ Բ Հայաստանի նկատմամբ իր ձուլող քաղաքականությամբ «մտադիր էր վերջնականապես մարել համաիրանական գահի նկատմամբ հայերի ունեցած հավակնությունները», քանի որ «Երան ու Աներան աշխարհների թագին» կարող էր տիրանալ նա, ով Հայաստանում հզորանար, եւ ում օգնություն ցուցաբերվեր, ուստի հայերին կրակապաշտություն պարտադրելու պահանջը «միանգամայն բնական ու տրամաբանական պահանջ էր» (էջ 25-26), եւ Տրդատը կամենում էր իր մականը տարածել մինչեւ Պարթեւստան (էջ 340):

Հեղինակը համաձայն չէ այն հայագետներին, ովքեր, իրավամբ, կարծում են, որ 450-451 թթ. հայ ժողովուրդը ազատագրական պայքարի բոցերի մեջ էր նետվել Սասանյանների քաղաքականության դեմ՝ երկրի ինքնուրույնությունը, կրոնը, ազգային արժեքները պահպանելու համար (էջ 27): Հիշենք 449 թվականը, երբ հայոց, վրաց եւ աղվանական այրուձիները տարվելով Դարսկաստան՝ փակվեցին Դահ դուռ անունով կիրճում, ենթարկվեցին բռնությունների, նրանց ստիպեցին ուրանալ հավատը, ապա քշեցին Միջին Ասիա, որտեղ մղված մարտերում նրանցից շատերը զոհվեցին, իսկ ողջ մնացածներին ենթարկեցին քաղցի ու ծարավի, խոշտանգումների[10]: Նույն թվին Հայաստան ուղարկված Դենշապուհ պաշտոնյայի անցկացրած աշխարհագրով հույժ ծանրացվեցին հարկերը, վերացվեց Եկեղեցու ապահարկությունը, դատաստանական իրավազորությունը, Վահան Ամատունին զրկվեց հազարապետի պաշտոնից, ժողովուրդը ենթարկվեց անլուր բռնությունների[11]: Իսկ Հազկերտ Երկրորդի կողմից Հայաստան ուղարկված Միհրներսեհը հայերին կրոնափոխության առաջարկ է արել, որը կտրուկ մերժվել է Արտաշատի ժողովում: Նախարարներին Տիզբոն կանչելուց եւ հավատուրացություն պարտադրելուց հետո 700 մոգեր զորքի հետ ուղարկվում են Հայաստան՝ ժողովրդին կրոնափոխ անելու: Հասնելով Այրարատի Ծաղկոտն գավառի Անգղ գյուղաքաղաք՝ նրանք փորձեցին ավերել տեղի եկեղեցին՝ առաջացնելով բնակչության բուռն զայրույթն ու դիմադրությունը: Այդքանից հետո կարելի՞ է արդարացնել հայերի հանդեպ Հազկերտ Երկրորդի վարած քաղաքականությունը, պնդել, որ «կրոնափոխությամբ չէր վտանգվում հայ ժողովրդի լինելիությունը», այլ նպատակ ուներ հաստատել խա-

9 «Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», աշխ. Ե. Տեր-Մինասյանի, Երեւան, 1957, էջ 6:

10 Տե՛ս *Եղիշէ*, էջ 18-19:

11 Անդ, էջ 23:

ղաղություն (էջ 28): Մի՞թե Հազկերտը կամենում էր խաղաղություն հաստատել՝ սպառնալով հայ նախարարներին հավատը չուրանալու դեպքում բնաջնջել «կնաւ եւ որդւովք եւ ազգաւ»[12], Հայաստան ուղարկել մեծաստվար զորք, ավերել երկիրը, քանդել եկեղեցիները[13]:

Իր կողմնակալ հայեցողության մղումով Դավթյանը կարծում է, որ 450-451 թթ. ժողովրդական պատերազմը «նախ եւ առաջ ներհայաստանյան պայքար էր», որն օգտագործեցին պարսիկները՝ հայերին վերջնականապես հնազանդեցնելու համար (էջ 40): Արտաշատի ժողովում, երբ հայերը մերժեցին հավատափոխության առաջարկը եւ պայքարի ելան Վասակ Սյունեցու դեմ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, արդյո՞ք մաքառում էին միմյանց դեմ: Իսկ այն, որ պայքարի մասնակիցները պառակտվեցին երկու մասի՝ Վարդանանց եւ Վասակյանց, ոչ թե պատերազմի պատճառ էր, այլ Սասանյան դռան վարած քաղաքականության հետեւանք: Հազկերտ երկրորդը, ինչպես վկայում է Եղիշեն, «զամենայն զանարժանս յառաջ մատուցանէր եւ զամենայն զարժանաւորսն յետս տանէր»[14]: Հայ նախարարներին պառակտելու նպատակ էր հետապնդում նաեւ քրիստոնեությունն ազատ դավանելու վերաբերյալ արքայի ներման հրովարտակը:

Իրականությանը հակասում է այն պնդումը, որ 450-451-ի «հայոց ապստամբությունը վերափոխվեց Հայաստանյայց Եկեղեցու խռովության», եւ որ առճակատումը ոչ թե Հայաստանի ու Պարսկաստանի, այլ Սասանյան արքունիքի եւ Հայ Եկեղեցու միջեւ էր (էջ 43): Մտացածին այս պնդմամբ ստացվում է, որ Հազկերտ Երկրորդի քաղաքականությունը հարվածում էր ոչ թե հայ ժողովրդին, նրա ազատությանն ու ինքնուրույնությանը, այլ սոսկ Հայոց Եկեղեցուն: Մինչդեռ փաստերն այլ բան են ապացուցում. չէ՞ որ Եկեղեցուն հարվածելով՝ թուլանում էր ժողովրդի հոգեւոր զորությունը:

Հեղինակը նշում է, որ պատմությունը չի ընդունում, երբ «իրադարձությունները խեղաթյուրվում կամ ծառայեցվում են սեփական գաղափարներին», որպիսին իբր կատարում են Հայ Եկեղեցին, հայ պատմագրությունը (էջ 61): Ցավոք, ի հեճուկս հրապարակախոսի, լրագրողի եւ պատմաբանի իր առաքելության, Դավթյանը զերի է մնում իր կանխակալ մտահայեցությանը՝ մոռանալով, որ գիտությունը պահանջում է անաչառ, կշռադատված ու մտառու լուսաբանումներ: Նա գտնում է, որ 450 թ. Դենշապուհի աշխարհագիրն ու դրան ուղեկցող միջոցառումներն «ավելի շուտ ուղղված էին եկեղեցական վերնախավին, առաջին հերթին՝ Լուսավորչի տոհմին», քանի որ Դենշապուհը գիտեր, որ այդ տոհմը «չափազանց անկուշտ» ձեւով ջանում էր դառնալ Հայաստանի ամենախոշոր ավատատերը: Եւ իբր Դ դ. կեսերից սկսած՝ Հայոց Միջնաշխարհի 15 գավառները Լուսավորչի տան ժառանգական սեփականությունն էին (էջ 62): Հեղինակը մոռանում է, որ Սահակ Պարթեւի վախճանվելուց (439 թ.) հետո արդեն մարել էր նրա տոհմը, ուստի 450-ական թթ. չէր

12 *Ղազար Փարպեցի*, II, ԻԶ, էջ 48:
13 Տես *Եղիշէ*, էջ 48:
14 Անդ, էջ 16-17:

կարող որեւէ գործառնությամբ հանդես գալ: Հայոց Միջնաշխարհի 15 գավառներն, ըստ Փավստոս Բուզանդի, Լուսավորչի տան կաթողիկոսները «ձեռական իշխանութեան ունէին իբրեւ սեպհական ի բնէ»[15]: Այդ գավառների մեծ մասին տիրում էին Արշակունիները: Հողատիրույթներ ուներ նաեւ Եկեղեցին, բայց ասել, թե դրանք լիովին Լուսավորչի տան սեփականությունն էին, հակասում է աղբյուրների ընձեռած տվյալներին[16]: Նշված 15 գավառները Արշակունիների «ոստան»-ի այն տարածքներն էին, որոնք գտնվում էին կաթողիկոսների «գործակալական» իշխանության ոլորտում[17]: Նշենք նաեւ, որ Միջնաշխարհից դուրս՝ Տարոն գավառում, գյուղեր ուներ Հայր մարդպետը[18]՝ Ներսես Մեծի երդվյալ ախոյանը:

Դավթյանի կարծիքով՝ ազատագրական գոյամաքառումների պահին Եկեղեցու համար «կարեւորը արտոնությունների վերականգնումն էր, ոչ թե դավանանքի ազատությունը» (էջ 99): Նա մոռանում է, որ առանց դավանանքի պահպանման, հնարավոր չէր Եկեղեցու գոյությունը, եւ Հայաստանում գործադրվելու էին պարսից օրենքները, որոնց աղբյուրը զրադաշտական կրոնն էր, մինչդեռ երկրում քրիստոնեության պահպանման շնորհիվ գործադրվում էին եկեղեցական կանոնները, քրիստոնեացված սովորութային իրավունքն ու օրինակարգը: Սասանյան դուռը եւ կանգնեց դրանք վերացնելու մտքից՝ սրիպված տեղի տալով Վարդանանց պայքարի առջեւ, եւ ոչ թե համակերպման ուղի որդեգրած Վասակյանց շնորհիվ:

Անհեթեթ է նաեւ այն պնդումը, որ իբր Տղմուտի ափին մղվող մարտը «ոչ այնքան պարսիկ զավթիչների դեմ, որքան հայոց ներքին պատերազմն ավարտելու համար պիտի լիներ»: Եւ իբր այդ «ներքին պատերազմի» նպատակը իշխանության հարցի լուծումն էր, ինչը չիրագործվեց քաղաքացիական պատերազմի ընթացքում (էջ 104): Գարձեւ Վարդանանք կենաց եւ մահու պայքարի բոցերի մեջ էին նետվել ոչ թե նվիրական սկզբունքների՝ հայրենի երկրի ինքնությունն ու ազատությունը, հավատը պաշտպանելու, այլ «իշխանության» հասնելու համար: Հայաստանի ինքնուրույնությունը, կրոնը պահպանելը հայ ազնվականությանն ընձեռում էր ինքնավար իրավունքները պահպանելու հնարավորություններ, բայց դրան հասնելու համար հարկավոր էր ձեռք բերել պատմական կռվանը՝ ունենալ ազատ ու ինքնուրույն հայրենիք, ազգային կրոն, ինչը տվյալ պահին հնարավոր էր միայն մարտնչելու գնով:

Հայոց ազատագրական պատերազմի մասին թյուր գաղափարը հեղինակին դրդում է գրելու, թե իբր «Տղմուտի ափին պարսիկները պիտի կանխեին Հայոց զորքի հավանական ներխուժումը Պարսից երկիր» (էջ 105) եւ որ Ավարայրում պարսիկներն ավելի շատ պաշտպանվող կողմ էին (էջ 122), եւ հայերի հաղթության դեպքում «վտանգ էր կախվում անմիջապես Տիգրոնի վրա» (էջ 106): Պատմական

15 *Փաւստոս Բուզանդ*, IV, ԺԴ, էջ 97:

16 Տե՛ս *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, С.Петербург, 1908, с.125.

17 Տե՛ս *Հ. Մանանդյան*, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, Բ հատոր, Ա մաս, (Երկեր, Բ, Երեւան, 1978, էջ 338):

18 *Փաւստոս Բուզանդ*, IV, ԺԴ, էջ 97:

փաստերը կոծկելու դեպքում ամեն ինչ կարելի է գրել, իսկ ո՞ր մնաց գիտական ու քաղաքացիական խիղճը: Մի՞թե բազում մարտերում կոփված Վարդանը կտրվեր նման ցնորական գաղափարով՝ քաջ գիտենալով, թե ինչպիսի անհավասար գոտեմարտի մեջ է մտնում հզորազոր ախոյանի հետ:

Ամուր կառչելով իր կանխակալ ենթադրություններին՝ Դավթյանը գրում է, թե իբր Ավարայրից սկսվեց համայնքի վերածվելու հայերի «ազգային ուղին», իսկ Նվարսակի պայմանագիրը ցույց տվեց, որ հայերն «ամբողջը վերջնականապես կորցնելուց հետո» արդեն ընդունակ էին «զոհանալ փոքր ձեռքբերումներով» (էջ 122): Մի՞թե փոքր ձեռքբերում էր այդ պայմանագրով Հայաստանին վերապահված ներքին ինքնավարությունը, հոգևոր ազատությունը, նախարարական պետականության հիմքերի ամրապնդումը, որի շնորհիվ երկիրը դիմակայեց ո՛չ միայն պարսից, այլև հետագայում արաբական բռնություններին՝ պահպանելով երկրի ինքնուրույնությունը: Մի՞թե «փոքր ձեռքբերում» էին Բագրատունյաց թագավորությունը, Զաքարյանների եւ մյուս տոհմերի իշխանությունները, որտեղ հայերը լիիշխան տերեր էին՝ օժտված պետական զորությամբ ու կենսունակությամբ:

Դավթյանը կարծում է, որ «Վասակ Սյունին էր Հայաստանյայց Եկեղեցու թշնամին եւ ոչ Հազկերտ Երկրորդը», քանի որ Վասակը կարող էր դառնալ հայոց թագավոր եւ «բոլորովին նսեմացներ եւ՛ Եկեղեցու, եւ՛ նրա հենասյուն նախարարությունների դերը երկրում»: Իսկ դա նա անելու էր, որպեսզի ստեղծեր «հզոր ու կենտրոնաձիգ պետություն» (էջ 143): Բայց առանց նախարարությունների եւ Եկեղեցու զորակցության Վասակն ո՞ւմ վրա էր հենվելու, որպեսզի թագավորեր երկրում: Վասակը Եկեղեցու թշնամի՞ն էր: Ինչպես վկայում է Կորյուն պատմիչը, նա «Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրեւ որդւոց առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, եւ ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան…»[19]: Եկեղեցու թշնամին լինելով՝ նա ինչպե՞ս կարող էր ազատագրական շարժման գլուխ կանգնել կամ օծվել Հայոց թագավոր:

Դավթյանը սխալմամբ 482 թ. Ներսեհապատի ճակատամարտի պահին Վահանանց զորքի թիվը հասցնում է 30 հազարի (էջ 154) այն դեպքում, երբ, ըստ Ղազար Փարպեցու, նույն թվականին Ակոռիի մոտ տեղի ունեցած մարտի ժամանակ Վահանանց զորուժի թվաքանակը 400-ից չէր անցնում[20]: Իսկ այն, որ Վահան Մամիկոնյանն իրեն համարում է Վաղարշ արքայի «ծառա», բխում էր Նվարսակի պայմանագրի երրորդ կետից, որով պարսից արքան առանց միջնորդի շփվելու էր հայ նախարարների հետ եւ միջամուխ էր լինելու Հայաստանի գործերին: «Ծառայ» բառեզրը հայերենում ունի «վասալ» իմաստը, իսկ Դավթյանի կարծիքով Վահանը կամովին իրեն ներկայացրել է իբրեւ պարսից թագավորի «ծառա» եւ հրաժարվել անկախությունից (էջ 165): Եւ իբր Վահանը «հեռու էր քաղաքականությունից. այսքան ուժ վատնել եւ այս արդյունքն ունենալ»,-պաթետիկ ոճով գրում է հեղինակը (էջ 166): Իսկ արդյունքները, ինչպես գիտենք, արդարացրին ազատագրական

19 *Կորյուն*, Վարք Մաշտոցի, աշխ. Մ. Աբեղյանի, Երեւան, 1941, էջ 63:
20 Տե՛ս *Ղազար Փարպեցի*, III, ԿԹ, էջ 124:

շարժման մասնակիցների սպասումները: Հայաստանը պահպանեց իր ներքին ինքնավարությունը, կրոնը, զորուժը, նախարարական համակարգը: Արդյունքներից էր նաեւ 485 թ. Վահանին Հայաստանի մարզպան կարգելը: Մինչդեռ Դավթյանը գտնում է, որ Նվարսակի պայմանագրում ոչ մի քաղաքական կետ չկար, միայն մեկը եւ այն էլ Եկեղեցու օգտին, որով պարսից դուռը Եկեղեցուն թույլ էր տալիս պահպանել իր ծիսակարգը (էջ 210): Պայմանագիրը կնքելիս ոչ թե Եկեղեցին էր հանդես գալիս որպես բանակցող կողմ, այլ Վահանը՝ յուրայիններով, որոնք հասան քաղաքական ձեռքբերումների, նաեւ կրոնական ազատության: Նրանք ստացան այն, ինչ կամենում եւ պահանջում էին. հասկացնել տվեցին Արյաց դռանը, որ մերժվելու դեպքում իրենք շարունակելու են ընդդիմանալ[21]:

Զարմանալի է այն միտքը, թե իբր հայտնի չէ՝ Վահան Մամիկոնյանը «երբեւէ հրաժարվե՞ց արդյոք զրադաշտականությունից» (էջ 169): Ինչ է, Վահանը զրադաշտակա՞ն էր, երբ Նվարսակում պահանջում էր կրոնի ազատություն կամ Ակոռիի ճակատամարտից առաջ մտնում էր եկեղեցի, ստանում Կաթողիկոսի օրհնանքը, մարտնչում հանուն քրիստոնեական հավատի՝ պարսից Միհրան զորապետին ասելով. «զլաւ մահ մեռանիմ քրիստոնէութեամբ, քան թէ ուրացութեամբ գնել զանցաւոր փառս, եւ զյաւիտենից կորուստն ժառանգել»[22]:

«Հայ իրականության մեջ ժողովուրդ եւ եկեղեցի հասկացությունների նույնացումը հանգեցրեց նրան, որ աստիճանաբար ժողովուրդն սկսեց կտրվել սեփական հողից ու իրեն զգալ հավատացյալների մի համայնք»,-գրում է Դավթյանն ու շարունակում, թե իբր երկիրը վերածվում էր անարժեք միջավայրի «եւ նեղության դեպքում ենթակա էր փոփոխման, իսկ բարձրագույն արժեք էր հաստատվում Եկեղեցին, որին էլ հարկ էր պաշտել, պաշտպանել…»: Արդյունքում հայրենիքի գաղափարը փոխակերպվում է սոսկ հոգեւորի եւ դառնում «հավատք եւ փոխադրելի», որը կարելի է տեղափոխել ցանկացած երկիր…(էջ 201):

Չափազանցությունն էլ ունի իր սահմանները. մի՞թե հայ ժողովուրդը, հազարամյակներ ապրելով իր կենարար հույսերի երկրում՝ Հայոց աշխարհում, դյուրությամբ կարող էր հրաժարվել հայրենի հողից ու ջրից, որից նա ուժ էր ստանում: Դավթյանը չի կամենում ընդունել, որ Եկեղեցին ժողովրդից, նրա բնատարածքից անբաժան է: Դաժան հանգամանքները երբեմն հարկադրել են ժողովրդի բեկորներին հեռանալ Հայրենիքից, բայց դա հարվածել է նաեւ Եկեղեցուն՝ զրկելով իր կենսատարածքից, հավատացյալ ընդհանրությունից: Մի՞թե Եկեղեցին էր մեղավոր, երբ ԺԱ դ. Բյուզանդիան կլանեց հայկական իշխանությունները, հայերին զրկեց կաթողիկոսություն ունենալու իրավունքից, կամ երբ սելջուկ-թյուրքերի հարձակումների հետեւանքով հայոց կաթողիկոսները տեղից տեղ էին փոխադրվում՝ «իբրեւ զայծեամն յորսորդաց եւ ի շանց փախուցեալք…»[23]:

Շարունակելով մեղանչել պատմական ճշմարտության դեմ հեղինակը պնդում

21 Անդ, III, ՁԹ, էջ 162:
22 *Ղազար Փարպեցի*, III, ՀԵ, էջ 139:
23 *Ներսես Շնորհալի*, Թուղթ ընդհանրական, աշխ. Է. Բաղդասարյանի, Ե., 1995, էջ 60:

է, թե Հայաստանի հայաթափումն սկսվել է Ե դարից, եւ դրա պատճառները «եղել են իշխանության համար Եկեղեցու մղած անհաշտ պայքարն ու համաքրիստոնեական սկզբունքները կենսակերպի վերածելու քարոզչությունը»: Մտացածին մեղքեր վերագրելով Եկեղեցուն՝ նա նաեւ կարծում է, որ «հայկական քաղաքակրթությունը ոչնչացնելուց, հայոց պետականության կործանմանը նպաստելուց հետո բնօրրանից ժողովրդի արտահոսք սկզբնավորելը» հայությանը Եկեղեցու հասցրած խոշոր վնասներից մեկն էր (էջ 207):

Առանց որեւէ վերապահության, հեղինակը մեջբերում է Բյուզանդիայի Մորիկ կայսեր (582-602) կարծիքը հայերի՝ իբրեւ «խոտոր եւ անհնազանդ ազգի» մասին: Հայերը պետք է հնազանդվեին այդ կայսեր հայադավ քաղաքականությանը, որի նպատակն էր Հայաստանը թողնել առանց հայերի, վերացնել Հայ Առաքելական Եկեղեցին: Կայսրը պետք է արդարացներ հայերի հանդեպ իր որդեգրած քաղաքականությունը:

Դավթյանը Հայ Եկեղեցու հասցրած խոշոր վնասներից մեկն է համարում «Հայոց ազգային ոգու տկարացումը» (էջ 241): Ազգային ոգու տկարացո՞ւմ էր, երբ հոգեւոր այրերը Ավարայրի մարտից առաջ ոգեվառում էին ժողովրդին՝ քաջաբար կռվելու հանուն հայրենիքի ու քրիստոնեական հավատի: Ահազարհուր իրավիճակում հայ եկեղեցականները ժողովրդի հետ էին, կիսում էին նրա տառապանքները, ամոքում ցավերը, ներշնչում հույս եւ լավատեսություն, նպաստում նրա հոգու զորացմանը, դիմադրական կորովին: Մերժելի է այն պնդումը, թե «Եկեղեցին ոչ միայն մերժեց ազգային պետությունն ինքնին, այլեւ մշտապես պայքարեց երկիր պահող այդ գաղափարի ցանկացած դրսեւորման դեմ» (էջ 244) եւ «չէր թաքցնում, որ իրեն հարկավոր է հայ ժողովուրդ, բայց ոչ Հայոց պետություն» (էջ 248): Մինչդեռ հզոր ու կենսունակ ժողովուրդ մնալու գլխավոր պայմանը պետականության առկայությունն է, առանց որի ժողովուրդը զուրկ կլինի թե՛ հայրենիքից եւ թե՛ հավաքական գոյության հնարավորություններից: Մի՞թե Եկեղեցին մերժում էր Հայոց պետականությունը, որպեսզի դյուրություններ մատուցի նվաճողներին եւ ժողովրդին թողնի անպաշտպան, մատնի օրհասների ու կոտորածների: Երբ հայոց կաթողիկոսներն օծում էին հայոց թագավորներին կամ երբ պետության շահերը պաշտպանում էին օտար բռնատիրողների առջեւ՝ ենթարկվելով բանտարգելքի, դե՞մ էին հայոց պետականությանը, չէի՞ն նվիրագործում հայոց պետությունն ու նրա վարած քաղաքականությունը: Կամ երբ կանոնակարգում էին ժողովրդի կյանքը, չէի՞ն նպաստում նրա հավաքական գոյությանը, որն առանց օրենքի չէր կարող հարատեւել: Այդ կանոնների շնորհիվ չէ՞ր, որ հայն իրեն չէր զգում իրավամերժյալի վիճակում:

«Պետականամերժություն» վերտառությամբ գլխում հեղինակը կամենում է հաստատել այն ենթադրությունը, թե Հայ Եկեղեցին ոչնչացրել է Ա-Բ դարերի մատենագիր Ողյումպի եւ Բարդածանի (154-222) մատյանները, «որովհետեւ այդ հեղինակները գրել էին Հայոց արքաների պատմությունը» (էջ 260): Որտեղի՞ց է հայտնի, որ Եկեղեցին է դրանք ոչնչացրել: Մեզ չեն հասել նաեւ շատ քրիստոնյա մատենագիրների երկեր. դրանք եւս Եկեղեցի՞ն է կորստյան մատնել: Մեր պատմիչները,

լինելով եկեղեցականներ, գրել են հեթանոսական Հայաստանի թագավորների մասին, հաճախ դրվատել նրանց, բայց նրանք չեն դատապարտվել Եկեղեցու կողմից:

Հեղինակն անարդարացի է, երբ Գրիգոր Մագիստրոսին դիտում է որպես Պետրոս Գետադարձի ձեռքով 1045 թ. Անին Բյուզանդիային հանձնելու վերաբերյալ վավերացրած գործարքի մասնակից (էջ 263-264): Մագիստրոսը Գագիկ Երկրորդին սատարում էր՝ թյուրքերի դեմ Հրազդանի կիրճում փանելով հաղթանակ[24]: Նրա մասին բացասական կարծիքները հենվում են Սամվել Անեցու Ժամանակագրության տպագիր բնագրում սպրդած այն հաղորդման վրա, ըստ որի՝ Մագիստրոսը, Վեստ Սարգիսը եւ Պետրոս Գետադարձը «ենեգեցին զԳագիկ եւ զԱնի եւ ի կայսրն Յունաց»[25]: Սակայն Սամվել Անեցու հնագույն՝ իր ապրած ժամանակաշրջանում օրինակված ձեռագրերում այդպիսի տեղեկություն չկա[26]: Անգամ Բագրատունյաց թագավորության անկումից հետո Մագիստրոսը, ոգեկոչելով հայոց թագավորների փառքը, գրում է, որ տակավին կանգուն է Հայոց թագավորությունը[27]: Նա թեեւ հունական մշակույթի եւ գիտության ջատագով էր, բայց ընդդիմադիր վերաբերմունք ուներ Բյուզանդիայի նվաճողական ծրագրերի նկատմամբ եւ տակավին 1030-ական թվերին իր որդուն կոչ ուղղեց՝ զենքի դիմել Հայաստանը շահագործող բյուզանդացիների դեմ՝ ոգեկոչելով Հայկ նահապետի սխրանքը[28]: Մագիստրոսը Միջագետքի կառավարիչ եղած տարիներին զորքով պաշտպանում էր Հայաստանի սահմանները[29]: Մոկաց Գրիգոր եպիսկոպոսին հղած նամակում նա գրում է, որ Աստծու պատվիրաններից գլխավորը հայրենի երկրի սահմանները պաշտպանելն է[30]:

Անշուշտ, հիմնավոր չէ Դավթյանի այն տեսակետը, թե Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսը (1763-1780) «մոլեռանդորեն պայքարել է ազգային պետականության վերականգնման գաղափարը քարոզողների դեմ», եւ որ նրա միակ համոզմունքն էր այն, որ «հայ ժողովուրդը պիտի միայն Եկեղեցի ունենա» (էջ 256): Սիմեոն Երեւանցին դեմ չի եղել հայ ժողովրդի ազատագրման գաղափարին, բայց նկատի առնելով, որ թուրք-պարսկական բռնատիրությունների պայմաններում հայ ժողովուրդը ոչ միայն ի զորու չէ սեփական ուժերով իրականացնել այն, այլեւ այդպիսի քայլերով կարող է վտանգել իր գոյությունը, գտնում էր, որ Հայաստանի ազատագրումը հնարավոր է միայն որեւէ քրիստոնյա հզոր պետության զորակցությամբ: Այդ

24 Տե՛ս *Մատթէոս Ուռհայեցի*, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 87-88:

25 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 107-108:

26 Տե՛ս *Գ. Մաթեւոսյան*, Սամվել Անեցու Ժամանակագրության հնագույն ձեռագրերը («Ակադեմիկոս Նիկողայոս Մառ» ժողովածու, Երեւան, 2005, էջ 41):

27 Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 61:

28 Տե՛ս անդ, էջ 234: Այս մասին տե՛ս *Ղ. Բարթիկյան*, Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջը, («Էջեր հայ ժողովրդի պատմության եւ բանասիրության», Երեւան, 1971, էջ 68-72):

29 Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 65, Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 99:

30 Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 91, 101:

նպատակով նա կապեր հաստատեց ռուսական արքունիքի հետ: Տվյալ պայմաններում Եկեղեցին էր հանդես գալիս որպես հայ ժողովրդի քաղաքական շահերի մարմնավորող: Նրա օրոք մեծացավ Հայոց կաթողիկոսության քաղաքական դերը, ամրապնդվեց Եկեղեցու միասնությունը, դադարեց կաթոլիկության քարոզչությունը Ախալցխայում, Բայազետում, Ալաշկերտում: Սիմեոն Երեւանցին բարեկարգեց Եկեղեցու Տոնացույցը, 1771 թ. Էջմիածնում հիմնեց տպարան (առաջինը Հայաստանում), 1776 թ.՝ թղթի գործարան եւ այլն: Նպատակն էր լուսավորությամբ բարեկրթել, հոգեւորապես զորացնել ժողովրդին: Պետականությունից զրկված հայությունն ի դեմս Մայր Եկեղեցու, լքված ու փիրազուրկ չէր զգում իրեն: Եկեղեցու շնորհիվ սնուցվում էր ազգային ընդհանրության գաղափարը: Պատմաբան Լեոն իրավացիորեն նշում է, որ «Սիմեոն Կաթողիկոսն իրականության մարդ էր եւ հասկանում էր իրական ուժերի փոխհարաբերությունները…հայ ազգի քաղաքական վիճակը…»[31]:

Դարձյալ կանխակալ տրամադրությամբ, առանց դույզն իսկ խղճի խայթի, Դավթյանը գրում է, որ Հայ Եկեղեցին ոչ միայն ոչնչացրել է հայկական քաղաքակրթությունն ու պետականությունը, սկզբնավորել հայ ժողովրդի արտագաղթը, այլեւ «խեղդել» է հայոց պետականության վերականգնման գաղափարը (էջ 265): Այնինչ, քրիստոնեական կրոնը եւ Հայոց Եկեղեցին երկրի պետականության եւ օրինակարգի գաղափարական հզոր կռվանն էին: Եկեղեցին սատար էր կանգնում Հայոց թագավորությանը՝ որպես մի ուժի, որն ի զորու էր պաշտպանել Եկեղեցուն ու նրա հոտին օտարների բռնություններից: Հեղինակը նաեւ նշում է, թե իբր հայ բազմադարյան գրականության մեջ «չունենք գոնե մի երկ, որով Հայոց թագավոր է փառաբանվել» (էջ 268): Մի՞թե հայ պատմագիրների երկերում չեն դրվատվում հայ թագավորների պատմարժան գործերը: Հիշենք նաեւ, թե ինչ է գրել Ժ դարի նշանավոր եկեղեցական գործիչ, մատենագիր Խոսրով Անձեւացին. «Թագաւոր զնմանութիւն Աստուածոյ բերէ յինքեան ի վերայ երկրի, իշխանութիւն ունելով կորուսանել եւ կեցուցանել»[32]: Իսկ նրա շնորհապանծ որդին՝ Գրիգոր Նարեկացին, իր «Մեկնութիւն Երգոց Երգոյն» երկում գրում է.«Քրիստոսի հրամանն է՝ հնազանդ լինել թագաւորաց իբրեւ Աստուածոյ»[33]: Նա Տրդատ Մեծ թագավորի շուրթերին է դնում հետեւյալ խոսքերը.«Որպէս տանուտէր որ ընդ իւրում տանն հոգայ, նոյնպէս եւ մեք հոգամք վասն Հայոց աշխարհի»[34]:

«Գրիգոր Պարթեւից մինչեւ Սահակ Պարթեւ կաթողիկոսներ,-գրում է Դավթյանը,-անիծում էին միայն Արշակունիների տոհմը» (էջ 273): Հիշենք, թե 450 թ. Արտաշատի ժողովի մասնակիցներն ինչ էին գրում Հազկերտ Երկրորդին գրած թղթում. «Ի նախնեաց ունիմք սովորութիւն աստուածատուր պատուիրանաւ՝ աղօթս առնել

31 Տե՛ս *Լեո,* Հայոց պատմություն, հ. III, գիրք II, (Երկերի ժողովածու, հ. III, Երեւան, 1973, էջ 279-282):

32 *Խոսրով Անձեւացի*, Մեկնութիւն ժամակարգութեան, Օրթագիւղ, 1840, էջ 136: Տե՛ս նաեւ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2607, թ. 86, ա:

33 *Գրիգոր Նարեկացի*, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 367:

34 Անդ, էջ 361:

ի վերայ կենաց թագաւորի, եւ անձանձրոյթ խնդրել յԱստուծոյ վասն երկայն ժամանակաց դորա»[35]: Մի՞թե Վրթանեսը, Ներսես Մեծը, Սահակը եւ մյուս Հայրապետները, պայքարելով Հայոց պետականության հիմքերը խարխլող հեթանոսամետ, պարսկամետ ուժերի դեմ, իրենց բարեփոխումներով, լուսավորչական ձեռնարկումներով չէին ամրապնդում Արշակունիների գահը՝ նրա շուրջը համախմբելով երկրի գործուն ուժերին, կասեցնելով ավատատիրության բնորոշ տարանջատ հակումներն ու հատվածական տրամադրությունները: Մի՞թե երբ Եկեղեցին նվիրագործում էր բարոյականությունն ու օրենքը, աշխատանքը եւ սերմանում միասնություն, հարված էր հասցնում Արշակունիներին: Թեեւ երբեմն մթագնում էին թագավորների եւ կաթողիկոսների միջեւ եղած հարաբերությունները, բայց դրանցում չկա այն, ինչ կամենում է տեսնել հեղինակը:

Օտարոտի է հեղինակի պնդումը, թե «Եկեղեցին կամեցավ եւ փոխարինեց հայկական պետականությանը», որով պատճառ դարձավ, որ «հայը դադարեց զգալ պետության կարիքը» (էջ 277-278): Նկատենք, սակայն, որ Հայոց միասնական պետականության կորստի պայմաններում Եկեղեցին շարունակեց պետական ավանդույթը՝ իր միավորող գործունեությամբ: Օտարի լծի դառնությունը ճաշակող հայության հավաքական գոյության զորեղ կռվանը դարձած Եկեղեցին հովանի դարձավ նրան՝ կապելով մայր հողի, նրա սրբությունների հետ, ապահովեց երկրի հոգեւոր անկախությունը, ինչը դարձավ ժողովրդի գոյապահպանման հիմնախարիսխը: Անգամ իսլամի գերիշխանության պայմաններում, երբ քրիստոնեական Եկեղեցին դիտվում էր իբրեւ «օտարերկրյա պետություն իսլամական կայսրության կազմում»[36], Հայ Եկեղեցին կարողացավ պահպանել երկրի ավանդական օրինակարգը, վառ պահել ազգային հավատն ու ինքնագիտակցությունը: Արդարացի չէ հեղինակի հայտնած այն միտքը, թե իբր հայոց «առաջին նախնու ոգուն, այսինքն ցեղի արմատին, սկզբին ու ինքնագիտակցությանը հավատարիմ մնալն ընդհատվեց քրիստոնեության ընդունումից հետո» (էջ 304): Քրիստոնեական կրոնը միավորող գործոն էր: Միաստվածությունը մեծ առաջադիմություն էր հեթանոսական բազմաստվածության համեմատ: Այն կարողացավ Հայաստանը զերծ պահել ուծացման վտանգից: Երկդարյա խառնակ վիճակից ու անհավասար մաքառումներից Արշակունիների երերուն գահն ամրապնդեց իր հիմքերը Տրդատ Մեծի օրոք, երբ քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն՝ դառնալով պետության գաղափարական նեցուկը: Նոր կրոնն ավելի զորեղ գտնվեց, քան զրադաշտականությունը՝ Հայաստանը պաշտպանելով նրա հորձանքից, ապահովելով հայ ժողովրդին ձուլումից: Տրդատ Մեծի նախորդ թագավորներից Որմիզդ-Արտաշիրը (261-272), ով Սասանյաններից էր, բազմելով Հայաստանի թագավորական գահաթոռին՝ խոստացել էր կրոնափոխել հայերին, հաստատել էր կրակապաշտական կենտրոն: Նրա օրոք զրադաշտական կրոնն արդեն սկսել էր պաշտոնապես տարածվել Հա-

35 *Եղիշէ*, էջ 28-29:
36 *А. Мец*, Мусульманский ренессанс, Москва, 1973, с.39.

յաստանում[37]: Սակայն Տրդատ Գ թագավորը կասեցրեց նրան՝ պաշտոնապես ընդունելով քրիստոնեական հավատքը: Փաստորեն, Հայաստանը դարձավ այն երկիրը, որտեղ աշխարհում առաջինը պետականորեն հռչակվեց այդ կրոնը[38]: Սակայն Դավթյանը կեղծիք է համարում այդ իրողությունը՝ առաջնությունը վերապահելով Միջագետքում Օսրոենե թագավորության գահակալ, ազգությամբ արաբ Աբգար Իններորդին (էջ 179-214, 320-321): Մինչդեռ հայտնի փաստ է, որ վերջինս քրիստոնեությունն ընդունել էր իբրեւ դինաստիական կրոն, ինչը, սակայն, վերացվեց նրա հաջորդների օրոք: Գ դ. ստեղծված ասորական գրականության երկերից մեկում՝ «Ադդայի վարդապետությունում» (հայերեն է թարգմանվել Ե դ.), նշվում է, որ Աբգարի հաջորդը եւ որդին՝ «այր չար եւ ապստամբող, լի ամենայն անօրէնութեամբ... ոչ ընդունէր զվարդապետութիւն քարոզութեան Աւետարանին»[39]: Թեեւ այս երկում քրիստոնեություն ընդունող է համարվում Եդեսիայի Աբգար Ե թագավորը (Ա դար), բայց իրականում նրա մասին գրույցն ստեղծվել է Գ դարի կեսին՝ Աբգար Իններորդի օրոք եւ վերաբերում է նրան[40]:

Պատմական ճշմարտությանն անհարիր է Դավթյանի այն կարծիքը, որ Տրդատ Մեծը Հայաստանում ոչ մի հենարան չուներ, բացի պարթեւական ծագում ունեցող իր արյունակիցներից, նաեւ Հայաստանի հետ որեւէ կապ չունեցող օտարներից (էջ 333): Նրա համոզմամբ Սասանյանները չեն կազմակերպել «ներքին դիմադրություն» Հայաստանի կրոնափոխությանը, որի գլուխ են կարգել Գրիգորին, ապա երկիրը կառավարել են Տրդատն ու Գրիգորը, ովքեր «ձեռնտու էին Հռոմեական կայսրությանը եւ Պարսկաստանին» (էջ 336-337): Հեղինակը չի կամենում ընդունել, որ քրիստոնեությունը պաշտոնապես հռչակելը ուղղված էր հենց Հայաստանի այդ հզորագոր հարեւանների դեմ եւ նպատակ ուներ վերացնել երկրում նրանց ազդեցությունը: Սասանյանները եւ Հռոմեական կայսրությունը հալածում էին քրիստոնեությունը, ուստի չէին կարող հովանավորել այդ կրոնը պետական աստիճանի բարձրացրած Տրդատին ու Գրիգոր Լուսավորչին: Մի՞թե Տրդատ Մեծը հենարան չուներ երկրում: Նա ոչ միայն վերականգնեց Մեծ Հայքի սահմանները, այլեւ հաստատեց հայ նախարարների իրավունքներն ու գահակարգը, միանգամից մկրտել տվեց նրանց՝ իրենց զորաբաժինների հետ: Մինչդեռ Դավթյանի կարծիքով Հռոմի եւ Տիզբոնի համար «երկու ուժ կար միայն, որոնց միավորվելու դեպքում մեծ վտանգ կարող էր առաջանալ... Այդ ուժերն էին հայ նախարարությունը եւ հայոց քրմութ-

37 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (ութհատորյակ), հ. II, Երեւան, 1984, էջ 53, *М. Бойс,* Зороастрийцы. Верования и обычаи, Москва, 1987, с.131.

38 Տե՛ս Ղ. *Գելցեր,* Փաստոս Բիզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն, Վենետիկ, 1896, էջ 65; *S. Weber,* Die katholische Kirche in Armenien. Ihre Begründung und Entwiclung vor der Trennung, Freiburg, 1903, S. 471, The Cambridge History of the Bible, vol. I, Cambridge, 1970, p. 366: Ղ. *Մանանդյան,* Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ հատոր, Ա մաս (Երկեր, Բ, էջ 132) եւ այլն:

39 *Ղեւոնդեայ Եղեսացի,* Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց եւ Քարոզութիւնք Ս. Թադէի առաքելոյ, Երուսաղեմ, 1868, էջ 57:

40 Տե՛ս *R. Duval,* Histoire politique, religieuse et littéraire d' Edesse jusqua la premiére croisade, Paris, 1892, p. 90-91.

յունը», ուստի Տրդատը, հետեւելով Սասանյաններին, ճնշված է պահում նախարարական տներին եւ հաշվեհարդար է տեսնում քրմերի հետ (էջ 337): Բայց Տրդատը կարո՞ղ էր հեղափոխիկ միջոցառումներ իրականացնել՝ չունենալով հենարաններ ի դեմս նախարարների: Իսկ քրմերն ու քրմորդիները, համակերպվելով նոր դրությանը, հիմնականում ընդունեցին քրիստոնեություն, ոմանք անգամ ձեռնադրվեցին եպիսկոպոսներ: Նրանցից Աղբիանոսի ժառանգները հետագայում դարձան կաթողիկոսներ:

Անհեթեթ է այն կարծիքը, թե իբր Գրիգոր Լուսավորիչն «իր աշխարհիկ տիրապետությունն էր հաստատում» Հայաստանում, բայց նրան «խանգարում էին Արշակունիները՝ նրանք պիտի վերանային», ուստի Դ դարում Հայոց պետականությունը հոգեվարք էր ապրում (էջ 351): Արդարացի չէ Գրիգոր Լուսավորչին նման «մեղքեր» վերագրելը: Այդ սրբահեզ այրը, Հայաստանը քրիստոնեության լույսով տոգորելուց զատ, ուրիշ նպատակ չէր հետապնդում: Նույն ուղեգիծն ունեին նաեւ նրան հաջորդած կաթողիկոսները: Հեղինակն արտառոց միտք է արտահայտում՝ գրելով, որ Տիրան թագավորի ու նրան հաջորդած Արշակ Երկրորդի եւ Պապի օրոք Հայոց թագավորական գահը «երբեք այնպիսի մի խոշոր ներքին հակառակորդ չէր ունեցել, ինչպիսին այժմ Հայրապետական աթոռն էր, որը հավակնում էր ընդհանրապես թիվ մեկ ախոյանը լինելու՝ առավել զորեղ, քան արտաքին թշնամիները...» (էջ 352): Երբ Վրթանես Կաթողիկոսը միջնորդեց հռոմեական կայսեր առջեւ՝ Տիրանին ճանաչելու հայոց թագավոր[41], մի՞թե կամենում էր դառնալ նրա ախոյանը: Կամ երբ Ներսես Մեծը սատար էր կանգնում Արշակ Երկրորդին ու Պապ թագավորին, նրանց հանդեպ թշնամանքո՞վ էր համակված: Եկեղեցին բնավ հակված չէր թագավորության հիմքերը խարխլելուն, քանի որ դրանով ծանրանալու էր իր վիճակը: Պետության վերացմամբ նվազում էր նաեւ քրիստոնեության՝ իբրեւ պետական գաղափարաբանության հեղինակությունը: Երբ հայ նախարարները հրաժարվեցին զորավիգ լինել Արշակ Երկրորդին, Ներսես Մեծը կշտամբեց նրանց՝ ասելով. «Ինչո՞ւ եք կամենում «մերժել զբնակ տեարն ձեր՝ զորս տուեալ է ձեզ յԱստուծոյ, եւ օտար տերանց ծառայել»[42]:

Դավթյանի կարծիքով քրիստոնեությունն ընդունելուց հետո իբր թե հայերն «այլեւս նույն ժողովուրդը չէին»: Նա համեմատության եզրեր է տեսնում թուրքալեզու նախաբուլղարների եւ հայերի, նաեւ՝ վերջիններիս ու Ատրպատականի բնակիչների միջեւ (էջ 367-368): Զուր ջանքեր: Նախաբուլղարներն, ինչպես հայտնի է, նվաճելով սլավոններին, վերցրին նրանց լեզուն՝ տալով ցեղանվանումը, իսկ ատրպատականցիները յուրացրին եկվորների լեզուն՝ պահպանելով իրենց անվանումը: Եթե հեղինակի պես մտածենք, կստացվի, որ հայերը մինչեւ քրիստոնեություն ընդունելն ուրիշ ժողովուրդ էին, իսկ նոր կրոնն ընդունելուց հետո թռիչք գործեցին՝ փոխելով իրենց լեզուն, կենսակերտվածքը: Նույն տրամաբանությամբ կարող ենք ասել, որ ռուսները, Եւրոպայի մյուս ժողովուրդները, վրացիները, քրիստոնեություն ընդունելով, փոխակերպվում էին ուրիշ ազգերի:

41 Տես *Մովսէս Խորենացի*, III, ԺԱ, էջ 268:
42 *Փաւստոս Բուզանդ*, IV, ԾԱ, էջ 137:

Հակառակ պատմական ստուգության եւ սկզբնաղբյուրների՝ Դավթյանը գրում է, թե Հայոց Եկեղեցին «հայկական թագավորությունը որպես իշխանություն ընդհանրապես չի ճանաչել», եւ դա արտացոլվել է նաեւ կանոնական որոշումներում, ինչպես եւ Մխիթար Գոշի Դատաստանագրքում (էջ 370): Մինչդեռ Շահապիվանի 447 թ. ժողովում ընդունված կանոնական որոշումով հաստատվել է, որ հաղթանակ տարած զորապետն ակնկալելու է «պսակ եւ պատիւ ի թագաւորէն»[43]: Կամ Ե դ. վերջին Դարտավից արեւմուտք ընկած թագավորական ամառանոց Աղվեն ավանում Վաչագան Բարեպաշտ թագավորի օրոք գումարված ժողովում սահմանվեց «ի մեր եպիսկոպոսաց եւ յերիցանց եւ եկեղեցւոյ բերանոյ՝ աւրնեալ եղիցի թագաւորն թագուհովն հանդերձ...»[44]: Իսկ Մխիթար Գոշի Դատաստանագրքում կարդում ենք. «Դատկերք են Աստուծոյ թագաւորք...»[45], եւ որ թագավորը «պարտ է նմանել Քրիստոսի»[46], «թագաւոր տիրապէս Աստուած է»[47]: Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում ասվում է. «յԱստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն, եւ յԱստուծոյ տեղին է համարած ի յերկրի»[48]:

Դավթյանը շարունակում է իր «հայտնագործությունները»: Այսպես, նա կարծում է, որ Հայոց Եկեղեցին «առաջինն էր, որ կյանքի կոչեց հավատաքննությունը»՝ ճիզվիտական օրդենի ստեղծումից 1100 տարի առաջ՝ Շահապիվանի ժողովից հետո (էջ 418): Ժողովի թվական է նշում 444-ը, ինչը սխալ է: Շահապիվանի ժողովի կանոնախմբի սկզբում նշված է, որ այն կայացել է «յեւթներորդ ամի վախճանելոյն սրբոյն Սահակայ»[49]: Սահակ Կաթողիկոսն, ինչպես հայտնի է, վախճանվել է 439 թ. սեպտեմբերի յոթին[50], ուստի ժողովի թվականը 447-ն է: Արտառոց է, անշուշտ, ճիզվիտների հետ Հայ Եկեղեցին համեմատելու փորձը: 1534-ին հիմնադրված այդ միաբանությունը նպատակ ուներ պաշտպանել եւ ավելի տարածել կաթոլիկ դավանությունը, պայքարել բողոքականության, նաեւ աղանդների դեմ՝ չխորշելով ոչ մի միջոցից: Այն իր թիկունքում ուներ Եւրոպայի հզոր միապետներին, Հռոմի պապին եւ կազմակերպված էր իբրեւ զորք: Շահապիվանի ժողովի գումարման տարում Հայաստանը զրկված էր թագավորությունից, ենթակա Սասանյան պետությանը, որն անլուր հալածանքների էր դիմում՝ հայերին կրոնափոխելու, ձուլելու համար: Զրադաշտական կրոնի, պարսից օրենքների ահագնացող հորձանքին դիմակայելու համար անհրաժեշտ էր հոգեւոր եւ իրավական պատնեշ ստեղծել դրանց դեմ: Ուստի այդ ժողովի որոշումները խստաշունչ էին, ունեին պետական վճիռների բնույթ: Որոշ հոդվածներ (Ը, ԺԹ) պատիժներ էին սահմանում ուրացողների, աղանդավորների

43 Կանոնագիրք Հայոց, Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Երեւան, 1964, էջ 424:
44 Կանոնագիրք Հայոց, Բ, Երեւան, 1971, էջ 100:
45 *Մխիթար Գոշ,* Գիրք դատաստանի, աշխ. Խ. Թորոսյանի, Երեւան, 1975, էջ 54:
46 Անդ, էջ 137:
47 Անդ, էջ 301:
48 *Սմբատ Սպարապետ,* Դատաստանագիրք, աշխ. Ա. Գալստյանի, Երեւան, 1958, էջ 5:
49 Կանոնագիրք Հայոց, էջ 423:
50 Տե՛ս *Գոդյուն,* Վարք Մաշտոցի, էջ 86:

համար[51]. նպատակն էր Սասանյաններից հովանավորվող ուրացողների, հեթանոսների դեմ անզիջում պայքարը եւ Հայ Եկեղեցու հիմքերի ամրապնդումն ահեղաշունչ այդ ժամանակներում: Նկատենք, որ երեք տարուց էլ պակաս ժամանակ էր մնում մինչեւ Վարդանանց շարժումը: 447 թ. Հայաստանի պարսկական բաժնի մարզպանը Վասակ Սյունին էր, ով, հավանաբար, հովանավորում էր Շահապիվանի ժողովը, հավանություն տալիս նրա որոշումներին[52], որոնք ազգային օրենսդրության, երկրի ներքին ինքնավարության պահպանման կռվաններ էին: Հայ Եկեղեցին բնավ նպատակ չուներ դրանով իր ազդեցությունը տարածել ուրիշ երկրներում: Նա ջանում էր պաշտպանել իր հոտին զորեղ հարեւանի հարաճուն սպառնալիքներից, ուծացման վտանգից, ամրացնել հայադավան ուղղափառության հիմքերը:

Գրքի հեղինակին մոլորության մեջ է գցել իր կանխակալ հայեցողությունը: Սա այն դեպքն է, երբ, Հ. Դավթյանի խոսքով՝ «իրադարձությունները խեղաթյուրվում կամ ծառայեցվում են սեփական գաղափարներին»: Նա նսեմացնող ոճով է վերհանում Հայոց Եկեղեցու, ազատագրական գոյամաքառումների, դրանց առնչվող խնդիրների պատմությունը՝ հանիրավի սեւացնելով Եկեղեցին, միակողմանի ու միտումնավոր ձեւով ներկայացնելով ազատագրական շարժումների պատմությունը, մոռանալով իր՝ քրիստոնեական քաղաքակրթության զավակ լինելու հանգամանքը: Նա մոռանում է նաեւ, որ իր արծարծած մտքերով ընդամենը ջուր է լցնում մերօրյա աղանդավորների ջրաղացին:

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

51 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 440, 461-462:

52 Տե՛ս *Ն. Ակինեան,* Կարմիրն Վարդան եւ Աւարայրի ճակատամարտն ըստ Ղազար Փարպեցու, Վիեննա, 1951, էջ 63, *Հ. Քիւրտեան,* Վասակ Սիւնի եւ Շահապիվանի ժողովը («Հայրենիք», 1954, էջ 78):